մայ կամաց կամաց բացվում է գաղտնիքը. արժանահաւատ մարդիկ հաւատացնում են, որ պ. Գօշէն այնչափ զզւանք տարաւ իր հետ այստեղի լուսաւորչական, բողոքական և կաթօլիկ հայերի մանաւանդ աշխարհական ներկայացուցիչներից, որ նա փոխանակ իր այդ հակակրութիւնը յայտնելու Անգլիայում, բարւոք համարեց էլ բոլորովին լռել հայերի մասին: Իրանից մասնաւոր կերպով հարցնող բարեկամներին, ասում են, նա ասել է միայն Կ. Պօլսի հայերի մասին. «C'est une serre d'intrigues et de fourberies»:

Բայց ինչպէս և ինչով կարող էր կազմել այնչափ ազատամիտ մի մարդ հայոց վրա մի այդպիսի գէշ գաղափար. եւրօպական մարդու վրա զզւանք բերելու կարելութիւնը հեշտութեամբ հասկանալու համար, հերիք է, որ նաև մի հայ մարդ գործ ունենայ սոցա հետ ու զննէ սոցա յատկութիւնները. միմեանց վրա միշտ բամբասանք, միշտ ամենաստոր ինսինուացիաներ, նաև «սերտ բարեկամ» համարվածների մէջ, դրպարտութիւն, փոխադարձ մատնութիւն, խարդախութիւն, կեղծաւորութիւն, յանուն ազգասիրութեան ամենամեծ շահամոլութիւն, ուխտազանցութիւն, տիրանենգութիւն և այլն և այլն. այսպիսի հարիւրաւոր անտանելի բաներ, որ կը նըկատէ մարդ սոցա ամենազարգացածների մէջ և զզւանքով կը կտրէ իր յարաբերութիւնները ու կը հեռանայ իր փոքր, բայց անմատչելի շրջանը:

Կը գայ դիցուք մի օտար մարդ, մի դիպլօմատ. իսկոյն ամեն կողմից հասնող կը վազէ նորա մօտ, ինչպէս ազգասէր և ազգի ներկայացուցիչ, լինի նա լուսանկար թէ փարմասոն: Եթէ լուսաւորչական է՝ առաջին բանը կը լինի ամեն տեսակ կեղտոտ խայտառակութիւններ խօսել այս ինչ, այն ինչ բողոքական կամ կաթօլիկ յայտնի աշխարհական կամ կրօնական անձի վրա. առաջին բանը կը լինի լրտեսական կերպերով ցոյց տալ քաղաքավարի և հիւրընկալ օտարին թէ շատ մեծ գաղտնիքներ գիտէ ինքը Թիւրքիայի վրա. յարաբերութիւններ ունենալով «սուլթանին շատ մօտիկ անձերի հետ» և այլն: Երևակայեցէք հիմայ խեղճ եւրօպացու դրութիւնը երբ նորա հետ մի ժամ յետոյ նոյն կերպով կը խօսէ հայ կաթօլիկը, մի քիչ յետոյ էլ հայ բողոքականը. դէհ այստեղ էլ մարդասիրութիւն կամ հայասիրութիւն կարող է տեղի ունենալ: Կ. Պօլսի հայ ինտելլիգենցիայի (հասարակ հայ ժողովուրդը, ինչպէս քանիցս ասել եմ, շատ ազնիւ և սքանչելի ժողովուրդ է, ինչպէս այդ տեղ, այնպէս և այստեղ) այս վատագոյն յատկութիւնները այնչափ վնասում են Հայաստանի խեղճ անմեղ մեր համարինների շահերին, որ էլ դժուար է ասել. տեսնելով մայրաքաղաքի զարգացած հայերին այսչափ ընկած և ապականված, եւրօպական մարդը ի հարկէ դատում է այնպէս, ինչպէս Եւրօպայում, այսինքն աւելի «կրթվածով» և «զարգացածով» նա դատում է և քիչ կրթվածի ու զարգացածի վրա, մինչդեռ որտեղից իմանայ նա թէ գիւղացի, արհեստաւոր և երկրագործ հայի ու նորա քաղաքենակ ազգակցի մէջ կան բոլորովին միմեանց ներհակ յատկութիւններ, որ տեղից նա իմանայ և հասկանայ, ասում եմ, այս մեծ և նշանաւոր տարբերութիւնը, երբ այս բանը չեն կարող հասկանալ նոյն իրանք հայերից շատերը:

Կ. Պօլսի ինտելլիգենցիան ունէ և մի ուրիշ յատկութիւն. նա ոչ միայն յարգանքով չէ վերաբերվում դէպի գաւառացի հարիւր անգամ աւելի բարձր, աւելի ազնիւ և համակրական հայը, այլ նա նորան արհամարհում է և պծգանքով է նայում նորա վրա, որովհետև գաւառացի հայը չունէ ոչ իր նման օյինբազական ճարպիկ մանիերներ, ոչ իր նման թեթև և շարժուն, բայց միշտ կեղծ ձևեր, ոչ իր վերացական և երևակայական փքուն բառերը, այլ նա երևում է իր ամենօրինական պարզութեան, ծանրաշարժութեան, քիչ դանդաղութեան, անկեղծութեան, սրտակցութեան և բացախօսութեան մէջ: Հարիւրաւորների հետ եմ խօսել այստեղ գաւառացի այս համակրալից տիպերի հետ, որոնք ասում են ամենայն պարզութեամբ. «էֆէնդի, Կ. Պօլսի հայերը հայեր չեն, այլ Աստուած վկայ նոքա ուրիշ թիւրլիւ միլլեթ (ուրիշ տեսակ ազգ) են»: Ահա գաւառացի հայի կարծիքը Կ. Պօլսի «հայ ատենաբանների» վրա, որոնք յաւակնութիւն ունեն տեսնել Հայաստանի աղքատ ժողովրդի մէջ մի տեսակ կիսակապիկներ, որոնց հարկաւոր է «մարդ շինել» տալով նոցա իրանց ստացած «լոյսը»: Ցաւալի չէ արդեօք սա... Ահա այս է պատճառը, որ մարդ կատարելապէս սխալում է համաձայնվել գաւառներից եկող ձայների հետ թէ Հայաստանի հայը իր յոյսը դնելով Կ. Պօլսի ինտելլիգենցիայի վրա չը պիտի ձեռնածալ նստէ, այլ պէտք է իր այդ յոյսը մի օր առաջ կտրէ և ինքը սկսէ հոգալ իր վիճակի նիւթական և մտաւոր բարւոքման վրա: Այս ձայները, ասում եմ, արդէն լսվում են Հայաստանից զանազան թղթակցութիւնների կերպով այս տեղի լրագիրներում և որչափ ուրախալի է այդ, որ խեղճ ժողովուրդը վերջապէս սկսեց ճանաչել իր բաղդը ղեկավարողների ապիկարութիւնը (несостоятельность) և մտածել իր գլխի ճարը ինքը հոգալու վրա: Կրկին ուրախալի է, կրկին մխիթարական է այս...

Ինչպէս երևում է, արդէն ինքը հասարակութիւնը սկսել է հետամուտ լինել «Միացեալ ընկերութեան» նախորդ անօրէն ժողովի գործերին, զանազան տեսակ խրատական և խոհուն դիտողութիւններ և առաջարկութիւններ անելով տեղիս լրագիրների մէջ ի նպաստ Միացեալ ընկերութեանց հաստատութեան: Այդ յօդուածներից մինը «Հայրենիքի» մէջ ուղարկում եմ ձեզ ներփակեալ որ տեսնէք և համոզվէք թէ որչափ բնական և առողջ միտք, որչափ հեռատեսական դատողութիւն ունէ այդ յօդուածագիր մի հասարակ զէյթունցի հայը հասարակաց խնդիրներ ըմբռնելու և պարզելու մէջ: Թէպէտ յօդուածի նիւթը ինքն ըստ ինքեան գուցէ մի նշանաւոր բան չէ, բայց յօդուածագիր մի լեռնցի հայի դատողութիւնները այնչափ հետաքրքրական են և ազատախոհ, որ պատիւ կարող էին բերել իւրաքանչիւր եւրօպացի պուբլիցիստին: Մինչդեռ այսպիսի ազատ և առողջ դատողութիւնների փոխանակ այստեղի ճառախօսների գլխում միայն խաօս և խաւար կը գտնէք թէկուզ հարցը վերաբերվի մի ամենապարզ և հասկանալի առարկային:

Զբաղելով ձեզ և ձեր ընթերցողներին այսպիսի ներքին հարցերով, ես ունեմ այն համոզումը թէ հայոց հարցով թող պարապվէ Ներսէս պատրիարքը և կոչված մարդիկ, իսկ մենք ամբողջ դաս հազարաւոր մարդիկների պիտի առիթ չը փախցնենք մեր ներքին գործերով զբաղվելու, միմեանց ցաւերը, թերութիւնները, ուժը ու արժանաւորութիւնները ճանաչելու համար, որ ըստ այնմ անօրինենք և կարգադրութիւն անենք մեր բռնելիք ընթացքի, մեր արած և դեռ անելի դրամական զոհողութիւնների վերաբերմամբ Հայաստանի բուն ժողովրդի օգտի համար: Բայց ձեր ընթերցողներին ուրախացնելու համար, հրճուանքով կը յայտնեմ, որ հայոց հարցը արդէն մտաւ իր պաշտօնական պերիօդի մէջ.

Գրիգոր Նիկողոսեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 սեպտեմբերի: «Правит. Вѣстн.» լրագրի մէջ տպված է արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչ Գիրսի շրջաբերականը դիպլօմատիկական ներկայացուցիչներին, որի մէջ ասված է. „Մօտ ազգականութեան կապերը, ժառանգական բարեկամութիւնը, որոնք միացնում են երկու թագաւորներին, բաւական բացատրում են կայսրների տեսութեան պատճառը և նրա բնաւորութիւնը: Այն սրտագին ընդունելութիւնը, որ գտաւ կայսրը, ամրացնում է բարեկամական յարաբերութիւնները ընդհանուր խաղաղութեան օգտի համար:“ Տուած է Դանցիգի մէջ, օգոստոսի 28-ին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 սեպտեմբերի: «Русск. Инвалидъ» լրագիրը վերջին ձեռնարկութիւնների տեսութեան մէջ նկատում է. «Կայսրը մինիստրութեանը նպատակ է դրել փոքրացնել պատերազմական ծախսերը, չը վնասելով զօրքերի պատերազմական պատրաստութեանը, փոքրացնել զօրքերի տարեկան գումարելը մեծացնելով իսկական ծառայութեան ժամանակամիջոցը և բաւականութիւն տալով զօրքերի գլխաւոր պէտքերին: Այդ ձեռնարկութիւնների հետևանքներն են. ծախսերի քչացնելը 6,500,000 ր., գումարվող զօրքերի թւի փոքրացնելը մինչև 190,000, ծառայութեան ժամանակամիջոցի որոշելը հետևակ զօրքերի և արտիլերիայի մէջ հինգ տարի, իսկ այլ զօրքերի մէջ 6 տարի, օֆիցերների ռոճիկի մեծացնելը: Լինելու է հեծելազօրքի պատերազմական պատրաստականութեան և կայսրութեան արևմտեան սահմանների պաշտպանողական շինութիւնների կատարելագործութիւնը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

անարատ և միայն մաքրել նրան շրջապատող վնասակար ազդեցութիւնից:

III. Պէտք է չափաւորել տուրքերը այնպէս, որ նրանք փոքր ի շատէ համապատասխան լինեն հողաբաժնից ստացած եկամուտին և առհասարակ գիւղացու տնտեսական դրութեան վերաբերմամբ:

IV. Պէտք է թոյլ տալ գիւղական ազգաբնակութեան մի մասին գաղթել Ռուսաստանի անապատ անբնակ բերրի հողերը և այդ նպատակով կարևոր է հետազօտել գաղթականութեան համար յարմար տեղերը, հիմնել զանազան կէտերում գաղթականական տեղեկացույցեր, օգնել նիւթապէս և բարոյապէս գաղթականութեան կանոնաւոր շարժման:—Նոյնպէս նպաստել բնակեցնելու մօտաւոր կալուածքներում գիւղացիներին, ուր կալուածքները շատ մեծ են, իսկ մարդ քիչ....

V. Պէտք է օգնել գիւղացիներին իրանց հողը լրացնելու, կլորցնելու. պատահում է, որ գիւղական հողը ընկած է լինում մի քանի տեղերում և այդ կտորների մէջ մնացած կալուածքի տէրը նեղացնում է գիւղացիներին. այդպիսի դէպքերում կարևոր է միացնել այդ կտորները կամ աշխատել գնել տալ կալուածատիրոջ հողը: Բացի դա հարկաւոր է աւելացնել անտառ կամ արօտատեղի—կամ թոյլ տալ նրանցով մասամբ օգտվելու:

VI. Պէտք է փոխել տէրունական հողերի վարձով տալու եղանակը. այժմ աճուրդում շատ անգամ գիւղը ընկնում է մի հարստահարողի ձեռքը, որ և յետոյ բաժանում է այդ գիւղերի վրա և նրանցից երկպատիկ և տասնպատիկ գանձում: Ժամանակն է աճուրդները այնպէս կարգադրել, որ այդ հարստահարողները վերանային և հողը ուղիղ ընկնէր գիւղացիների ձեռքը առանց միջնորդի:

VII. Պէտք է հիմնել բազմատեսակ կրեդիտներ. զանազան ընդհանուր նպատակների, նոյնպէս հող գնելու համար (որի համար երբեմն բաւական է և հասարակ փոխատուութիւնը զեմստվօյի կողմից): Անհրաժեշտ են նոյնպէս ապահովող և բարեգործական ընկերութիւններ ու հաստատութիւններ:

VIII. Պէտք է զարգացնել մանր արհեստագործութիւնը և նրանց մթերքների վաճառահանումը. միշտ հարկաւոր է ուշի ուշով հետևել նրա շարժման և եթէ մի արհեստ անշահաւէտ է դառնում—նրա աւելի լաւացնելուն օգնել կամ թէ սովորեցնել տալ մի ուրիշ աւելի ձեռնտու արհեստ: Այս բոլորի համար հարկաւոր է գործի խոր ուսումնասիրութիւն, որ և սկսված է վերջին տարիներս, (Մոսկվայում հիմնվել է մի յատուկ մասնաժողով դրա համար):

IX. Պէտք է հրատարակել նոր կատարեալ բազմակողմանի գործարանական օրէնսդրութիւն, որ թեթևացնէր մշակ ուժի հարստահարութիւնը, կանանց և երեխաներին պաշտպանէր ու վերջիններիս կրթութիւնից չը զրկէր, որ արգելէր վնասակար, խոնաւ և թանձրօդ բնակարաններ ունենալը. առաջն առնէր զանազան փորձանքների, ապահովէր վնասվածների կեանքը և այլն: Գործարանական արդիւնագործութիւնը պէտք է գիւղացուն իսկապէս օգնէ, տալով նրան գործ այն ժամանակ, երբ նա ազատ է երկրագործութիւնից. այդ նպատակով ցանկալի է նոյնպէս, որ գործարաններ կանգնեցնելու տեղերը ևս յարմարեցրած լինեն գիւղական ժողովրդի պայմաններին.

X. Պէտք է կազմակերպել անցաթղթերի գործը աւելի թեթև, կարողութիւն տալով աւելի հասարակ կերպով նրանց շարժվելու երկրի մէջ. մի խօսքով այնպիսի պայմաններ հաստատելով, որ անցաթղթի ազդեցութեան շնորհիւ, ոչ մի տեղ գործը կանգ չառնէր, արհեստագործութիւնը կամ երկրի մշակութիւնը չը յետաձգվէր կամ չը դժուարանար զուր տեղը:

XI. Պէտք է տարածել երկրի բոլոր խորքերը ընդհանուր և արհեստագործական կրթութիւն. բարձրացնել այն ընդհանուր գիտութեան պաշարը, որ խանձարուրված է հին աւանդութեան պատաններում, որչափ դա կարելի է ի հարկէ նոր պայմանների համեմատ:— Նոյնպէս կարևոր է ամեն կերպ քչացնել օրինակ գինետների թիւը և կանոնաւորել օղիի վաճառումը....

XII. Պէտք է ազատել գիւղացու դէպի իր համայնքը և թէ նահանգը ունեցած յարաբերութիւնները—վնասակար ազդեցութիւններից, ազատ տալով և շունչ փչելով բոլոր գիւղական կենցաղավարութեան մէջ, կազմակերպելով աւելի բընական և խելացի կերպով գիւղական ինքնավարութեան համակարգութիւնը....

VIII

Այստեղ թւեցի խնդիրներից գլխաւորները. դրանց վրա երկայն խօսելը անկարելի էր. շատ շատ կարելի եղաւ միայն կմախքը ներկայացնել: Բայց ինչպէս և իցէ՝ ընթերցողը բաւականաչափ նկատած կը լինի, որ այդ առաջարկութիւնների մեծ մասը կամ լրացնում է առաջվայ պակասութիւնները կամ ապագայ աւելի բարձր զարգացման է նախիրված: Երևի՝ խնդրի կիսատ կամ ծուռ վճռելը շատ թէ ուշ իր վատ հետևանքները կունենայ, այնպէս որ գործը երբեմն աւելի ևս խճճված, երկրորդ անգամ վերաքննելու հարկաւորութիւն կը զգայ:

Մենք ցոյց տուինք խնդրի մի կարևոր մասը—երկայն գրելը թէև գուցէ շատ հետաքրքրական կարող էր լինել գիւղական վիճակով պարապվողի համար. բայց այն ժամանակ, երբ նիւթեր լինէին նոյն իսկ Կովկասեան գիւղի մասին և երբ Կովկասեան գրականութիւնը այդ խնդիրը բարձրացնէր և օրվայ հոգս շինէր իր համար: Այդ դեռ չը կայ: Ընթերցողի հետաքրքրասիրութիւնը այդ կողմից շատ թոյլ է. գոնէ ոչ մի կերպ չենք նկատում, որ նա արտայայտվէր:

Ռուսաց գրականութիւնը այս րոպէին սաստիկ զբաղված է այդ բոլոր խնդիրներով. Ամսագրի համարները, լրագրի թերթերը, առանձին գրքոյկներ-հետազօտութիւնները միահամուռ աշխատում են բոլոր մանրամասները քննել, ուսումնասիրել և գործնական միջոցներ գտնելուն նպաստել: Այդ համաձայն գործունէութեան մէջ իւրաքանչիւր կարծիք, իւրաքանչիւր նոր յօդուած, շուտով գտնում է իր տեղը—կպչում է այս կամ այն ուղղութեան և գործնական իրագործութեան համար հարստացնում է նիւթերի, խորհրդակցութիւնների պաշարը:

Եթէ նկատենք, որ Կովկասի ընթերցողի համար գիւղական ազգաբնակութեան խնդիրների հետ մանրամասնաբար ծանօթանալը գին ունի—այն ժամանակ աւելի համարձակ կարող ենք գըրել երկայն և մանրամասն նիւթալից յօդուածներ: Բայց հարկաւոր են դարձեալ Կովկասեան գիւղական կեանքից նիւթեր և տեղեկութիւններ: Միայն լաւ գիտենալով սրանց—կարելի է և գրելի առարկայի մէջ ընտրութիւն անել, մի մանրամասնութեան վրա աւելի կանգ առնել, շատ մանրամասնութիւններ առանց ուշադրութեան թողնելու:

Հարկաւոր եմ համարում նկատել, որ յօդուածիս գրելուն բացի զանազան գրուածքներից, օգնել են և Իվանիւկովի ու Եանսոնի շարադրութիւնները: Առաջ բերել գրողների մէջ եղած հակասութիւնները, նրանց ներքին վէճ ու կռիւը—բոլորովին աւելորդ համարեցինք առ այժմ:

Մնում է դարձեալ խնդրելու, ով որ որչափ կարող է օգնի նիւթ ժողովելուն և հաղորդելուն: Այդ նիւթերով մենք աւելի սերտ կապված կը լինենք ընթերցողի հետ և մեր խօսակցութիւններն էլ աւելի հասկանալի, աւելի դիւրըմբռնելի կը դառնան:

Չը մոռանանք, որ գիւղական հիմնական խընդրի վճռահատութեան գործերը մեծ ազդեցութիւն պէտք է ունենան ամբողջ հասարակական զարգացման և առաջադիմութեան վրա: Ուղիղ հայրենասիրութիւնն էլ այդ խնդրի մէջ պահանջում է գործ և գործ և նա չի բաւականանայ դատարկ բացագանչութիւններով և ճարպիկ դատողութիւններով:

Մոսկվա, 23 օգ. Ա. Քալանթար